ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 13-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԾԿԸ ԵՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2006թ.մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման /ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման մասին կարգի IV բաժին/,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 10.12.2019թ. N 140-Ա որոշումը,սեփականության իրավունքի N 11022021-06-0055 վկայականը և հաշվի առնելով, որ քաղաքացի Արման Սեյրանի Շահվերդյանը ընդունել է ծածկի և զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով գնելու գնման նախապատվության առաջարկությունը և վճարել է օրինականացման համար սահմանված վճարները՝
որոշում եմ.

1. Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, ք.Թումանյան, 3-րդ փողոց,թիվ 3/5 հասցեում գտնվող 18,9քմ արտաքին մակերեսով ծածկը և դրա սպասարկման ու պահպանման համար 0,00643 հա մակերեսով հողամասը /ծածկագիր՝ 06-004-0012-0041/ ուղղակի վաճառքով օտարել Լոռու մարզ,Թումանյան համայնք,ք.Թումանյան, 3-րդ փողոց, շենք 3,բն. 3 հասցեում բնակվող քաղաքացի Արման Սեյրանի Շահվերդյանին 19402,8 /տասնինը հազար չորս հարյուր երկու դրամ ութանասուն լումա/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով /տարածաշրջանային 16 գոտիներ, 0,035 և 0.0016 համապատասխանաբար գործակիցներ/ որից՝
1/ ծածկի վաճառքի գինը կազմում է 18,9x20000x0.035= 13230 / տասներեք հազար երկու հարյուր երեսուն/ ՀՀ դրամ,
2/հողամասի վաճառքի գինը կազմում է 0,00643x0.0016x60000= 6172,8 /վեց հազար հարյուր յոթանասուներկու դրամ ութանասուն լումա/ ՀՀ դրամ:
2. Թումանյանի համայնքապետարանի 900265123407 հաշվարկային հաշվին մուծել 13230/ տասներեք հազար երկու հարյուր երեսուն/ ՀՀ դրամ, իսկ 900265123274 հաշվարկային հաշվին՝ 6172,8 /վեց հազար հարյուր յոթանասուներկու դրամ ութանասուն լումա/ ՀՀ դրամ: Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
3.Ծածկը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

2021թ. փետրվարի 18
ք.Թումանյան